

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հ/Հ	Անվանումներ	Նկարագրեր	Դիտողություններ
1.	Մասնագիտության անվանումը	մենեջեր առևտրի բնագավառում	
2.	Դերը	ապրանքների և ծառայությունների իրացումից առավելագույն շահույթ ստանալու նպատակով ղեկավարում են իրացման շուկաների ուսումնասիրության գործունեությունը, կազմակերպում են արտադրանքի իրացման գործընթացը, ծրագրում, կառավարում և համակարգում են կազմակերպության՝ առևտրին առնչվող գործունեությունը, տնօրենների (նրանց տեղակալների) ղեկավարությամբ և կառուցվածքային այլ ստորաբաժանումների ղեկավարների հետ համագործակցելով	
3.	Խնդիրների բնագավառը	<ol style="list-style-type: none"> 1. կոնֆլիկտների հարթեցում 2. ռեսուրսների բաշխում 3. կազմակերպության համար հնարավորությունների հայթայթում 4. ապրանքների ու ծառայությունների իրացման կազմակերպում՝ հաշվի առնելով սպառողների ճաշակն ու հնարավորությունները 5. կազմակերպության գործունեության շահութաբերության ու շուկայում իր դիրքի ապահովում 6. կազմակերպության ներկայացում ու նրա անունից բանակցությունների վարում 7. առևտրային որոշ նախագծերի մշակման հսկում 8. կազմակերպության արտաքին ու ներքին միջավայրի վերաբերյալ մասնագիտական բնույթի տեղեկատվության հավաքագրում; պլանների, նորմատիվ դիրքորոշումների մշակում ստացված տեղեկատվության հիման վրա 9. կազմակերպության նպատակների կատարման համար աշխատանքների խթանում և ակտիվացում 10. կազմակերպության ներքին նորմերի, աշխատանքի պաշտպանության և անվտանգության կանոնների և այլ օրենքների պահպանում և հետևում 	
4.	Աշխատանքային գործընթացները		
4.1.	Գործընթաց առաջին	1. ղեկավարում է իրացման շուկաների ուսումնասիրության գործունեությունը	
	Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> • տեղեկատվությունների լիակատար հավաքագրում, մշակում և վերլուծում 	

		<ul style="list-style-type: none"> որոշումների ընդունում իրացման քաղաքականության վերաբերյալ ստացված տեղեկատվությունների հիման վրա 	
4.2.	Գործընթաց երկրորդ	2. կազմակերպում է արտադրանքի իրացման գործընթացը,	
	Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> իրացման քաղաքականություննից ելնելով շուկաների ճիշտ ընտրում մարդկային ռեսուրսների ղեկավարման, խթանման և ակտիվացման միջոցների և մեթոդների ճիշտ օգտագործում իրացման գործընթացի պլանավորում, կազմակերպում և հսկում 	
4.3.	Գործընթաց երրորդ	3. ծրագրում, կառավարում և համակարգում է կազմակերպության՝ առևտրին առնչվող գործունեությունը	
	Կատարման չափանիշը	<ul style="list-style-type: none"> Օպտիմալ պլանների և ծրագիրների կազմում Կազմակերպության ռեսուրսների մոբիլիզացում, բաշխում և կառավարում Աշխատանքների հսկում, սխալների ուղղում 	
5.	Պատասխանատվությունը և բարդության աստիճանը		
5.1.	Պատասխանատվությունը	Նյութական, վարչական	
5.2.	Բարդության աստիճանը	Ցածր, միջին	
6.	Մասնագիտական գիտելիքները	Հոգեբանություն և մանկավարժություն, հավանականությունների տեսություն և մաթեմատիկական վիճակագրություն, մարքեթինգ, տնտեսագիտություն, բիզնեսի հիմունքները, մենեջմենթի հիմունքները, օպտիմալ որոշումների ընդունումը տնտեսագիտության և մենեջմենթի մեջ օգտագործելով համակարգչային տեխնոլոգիաները, աշխատակազմի ղեկավարում, ֆինանսական մենեջմենթ, լոգիստիկա, որակի ղեկավարում	
	Գիտելիքների գնահատման եղանակները		
7.	Կարողությունները	<ul style="list-style-type: none"> - դինամիկ և անորոշ իրավիճակներում որոշումների հիմնավորումը և ընդունումը - ռեսուրսների ղեկավարում - կազմակերպության փոփոխական արտաքին միջավայրում կողմնորոշում - ժամանակի կուռավարում - մտքերը հստակ ձևավորելու և համոզելու կարողություն - կազմակերպության աշխատանքների 	

		պանավորում և կանխորոշում - ղեկավարման էֆեկտիվության բարձրացման մեթոդների տիրապետումը - ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների, հաղորդակցման և կապի միջոցների օգտագործում	
	Կարողությունների գնահատման եղանակները		
8.	Հմտությունները	Հմտությունները ձեռք կբերվեն գործնական ժամերի ընթացքում ուսման ժամանակ	
	Հմտությունների գնահատման եղանակները		
9.	Լեզուների իմացությունը	Հայերեն և ռուսերենը՝ գերազանց, անգլերենը՝ լավ, անհրաժեշտ մակարդակի իմացություն	
10.	Համակարգչային իմացությունը	<ul style="list-style-type: none"> • MS Office • Internet • E-mail Ծրագրեր • Պրոցեսների մոդելավորման ծրագրեր 	
11.	Հարաբերվելու կարողությունները	հաղորդակցվող, շփվող, բարեկամացող, հարգանք և վստահություն գրավող, հարգալից վերաբերմունք ցուցաբերող դեպի տարբեր դիրք ունեցող մարդկանց	
12.	Հումանիտար գիտելիքների պահանջը	Սոցիոլոգիա, կոնֆլիկտոլոգիա, կուլտուրոլոգիա, տրամաբանություն, բիզնես հաղորդակցում	
13.	Իրավական դաշտի իմացության պահանջը	Տնտեսագիտական իրավունք, մաքսային իրավունք	
14.	Տնտեսագիտական գիտելիքների պահանջը	միջին	
15.	Բնագիտական գիտելիքների պահանջը	Ըստ որակավորման չափորոշիչի պահանջների	
16.	Մուտքային պահանջները	միջին (լրիվ) կրթության մակարդակ	
17.	Ավարտական պահանջները	Առևտրային մենեջերի համապատասխան մակարդակ	
18.	Կրթությունը շաունակելու հնարավորություններ	Բարձրագույն բակալավրիատ	